

**Մասիս Քիրքչիլկիլի, «Ուրիշ պատմություն մը կարելի՞ էր»,  
«Էտեյի շէլեր» հրատարակչություն, Իսթանպուլ 2018, 186 էջ**

Թուրքիոյ համայնավար քաղաքախօսութեան մէջ շատ կարեւոր ներդրում ունեցած յառաջատար գործիչ մըն է Մասիս Քիրքչիլկիլի: Ան իր հեղինակած բազմաթիւ գիրքերով, նաեւ կը ներկայանայ որպէս համայնավար գաղափարախօսութեան կարեւոր փիլիսոփայ մը Թուրքիոյ իրողութեան մէջ: Քիրքչիլկիլ մեծ վարպետութեամբ ընդլուծած է գաղափարի մարդու եւ համայնավար գործիչի յատկանիշները իրարու մէջ եւ այս բոլորով ալ յաջողած է Թուրքիոյ համայնավար միջավայրի մէջ անուրանալի ներդրում ունեցած կերպարի մը ձեւաւորումը հաստատել: Թուրքիոյ մէջ ինչպէս զանազան այլ օրինակներով ալ կը տեսնենք հայ մտաւորականը կարելի չէ, որ ընդմիջտ հեռու մնայ հայկական խնդրի մասին վերլուծումներու միջամուխ ըլլալէ: Նոյնիսկ մարդկայնօրէն իր նախապատումներն ուղղուած ըլլան ուրիշ ոլորտի պայմանները հայ գործիչին առջեւ կը պարզեն անխուսափելի առերեսում մը իր ժողովուրդի պատմութեան վերաբերեալ: Նկատի ունենալով Մասիս Քիրքչիլկիլի նախորդ ուսումնասիրութիւնները կարելի է այս վերջինն ալ դիտել ահա այս կաղապարի մէջ, ուր հեղինակը ակամայ կը մատնուի պատասխան փնտռելու ճակատագրական իմաստ ներկայացնող հարցումի մը: «Արդեօք ուրիշ տեսակ պատմություն մը կարելի՞ էր»: Ահաւասիկ բազում անգամներ ուղղուած հարցում մը, որուն պատասխանը դրական թէ բացասական ի գօրու չեն կատարուածը շրջանցելու, բայց կրնան ծառայել կատարուածի տեղի տուող բազմաբնոյթ գործօններու ճշգրիտ ընկալումին: Այո՛, այս պահուն կարելի է վիճել նման հարցումի մը իմաստին մասին: Այդ հարցումը իրականութեան մէջ ի՞նչ բան կրնայ փոխել, քանի որ ապրուած է մարդկութեան դէմ գործուած մեծագոյն ոճիրը՝ ցեղասպանութիւնը իր բոլոր հետեւանքներով:

Գիրքին տեւողութեան Մասիս Քիրքչիկիլ ահա այդ հարցումին պատասխանն է, որ կը փնտռէ, ոչ թէ ճշդելու համար, թէ ի՞նչ եղաւ, այն հասկնալու համար, թէ ի՞նչ պայմաններով ճանապարհը մեզ տարաւ դէպի այդ սեւ ոճրին:

Նիրթի այս ձեւով ուսումնասիրութիւնը մեզ կը դնէ պատմութիւնը ճիշդ հասկնալու, ճիշդ մեկնաբանելու հրամայականին դիմաց: Այդ հրամայականի պատասխանն է, որ կը փնտռէ Մասիս Քիրքչիկիլ իր այս վերջին հատորին մէջ: Իրականութեան մէջ հատորը գոյացած է տարբեր ժամանակներուն գրի առնուած գանազան յօդուածներու մէկտեղումով: Արդարեւ հեղինակը երկար ժամանակէ ի վեր միտքեր կը զարգացնէր անցած ու դարձածը ճշգրիտ կերպով ընկալելու եւ ապա փոխանցելու համար:

Նման պատմելաոճը ինքնաբերաբար մեզ կը թելադրէ ուսումնասիրել ԺԹ. դարու երկրորդ կեսէն սկսեալ Օսմանեան կայսրութեան պարզած ընկերաքաղաքական եւ տնտեսական համայնապատկերը: Եւ անշուշտ ո՛չ միայն այդքան, յստակ պատկերացումի մը համար կը կարօտի աւելիին ու աւելիին: Այս անգամ Քիրքչիկիլ այդ աւելին եւս յստակեցնելու միտումով իր հայեացքը կ'ուղղէ դէպի Եւրոպայի, Ռուսաստանի եւ Օսմանեան կայսրութեան գանազան հատուածներու դասակարգային խմորումներու եւ անոնց ուղղութիւն տուող գաղափարախօսութեան: Այս ընելու ժամանակ յաճախ մէջբերումներ կը կատարէ տուեալ ժամանակահատուածի կարեւորագոյն փիլիսոփաներու դիտումներէն եւ հաստատումներէն:

Ցեղասպանագիտութեան ընդհանուր գրադարանին մէջ ուրոյն տեղ մը կը գրաւէ Մասիս Քիրքչիկիլի այս աշխատասիրութիւնը, որ գանազան յատկութիւններով եզակի կը դառնայ այդ ընդհանուրին մէջ:

**Բագրատ Էսդուզեան**